ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք.Երևան, 0010, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./Tel.: 091407836
foi@foi.am , www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
Address: 4th floor, 1/3 P. Buzand St.,Yerevan 0010, Armenia

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ,
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ՉԵՅՆԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Չեյնալյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԱԿ) հիմնադրվել է մի խումբ լրագրողների և իրավաբանների կողմից 2001 թվականի հուլիսի 1-ին: ԻԱԿ-ի առաքելությունն է՝ նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենքի կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

2001 թվականից ի վեր ԻԱԿ-ը իր նպատակներին հասնում է ռազմավարական դատավարության ընթացակարգերի, վերապատրաստումների, փոխուսուցման միջոցառումների, մշտադիտարկումների, հանրային կրթության և շահերի պաշտպանության միջոցով: Հասարակական կազմակերպության խոշոր ձեռքբերումներից մեկը եղել է 2003 թվականի սեպտեմբերին «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի մշակումը և կիրառման խթանումը, վերջինս ընդունվել է Ազգային ժողովի կողմից նույն թվականի սեպտեմբեր ամսին: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ թիմի կողմից մշակված վերապատրաստման դասընթացի մոդուլները ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի և Տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից հաստատվել են քաղաքացիական և համայնքային ծառայողների շարունակական վերապատրաստումների համար պարտադիր բաղկացուցիչ մաս: ԻԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը հանգեցրել են տեղական և կենտրոնական իշխանությունների կողմից տեղեկատվության ակտիվ հրապարակման մեխանիզմների բարելավմանը, ինչպես օրինակ՝ 2011 թվականին բոլոր մարզային վարչակազմերի համար պաշտոնական մոդելային կայքերի ստեղծումը:

ԻԱԿ-ի կողմից իրականացվել է ավելի քան 45 ծրագիր: Ներկայումս, ԻԱԿ-ը Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացնում է 19 ամիս տևողությամբ՝ «**Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը**, որի բյուջեն կազմում է 390,000 Եվրո: Եվրոպական Միության աջակցության շնորհիվ ԻԱԿ-ի կողմից իրականացվել է 3 տարի տևողությամբ՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը, որի բյուջեն կազմել է 690.000 Եվրո, ինչպես նաև 2008-2013 թվականների ընթացքում ԻԱԿ-ի կողմից իրականացվել է 5 տարի տևողությամբ՝ ԱՄՆ ՄԶԾ/ Հայաստան կողմից ֆինանասավորվող «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» ծրագիրը, որի բյուջեն կազմել է 613,131 ԱՄՆ դոլլար և մի շարք այլ ծրագրեր:

Իր 17 տարվա գործունեության ընթացքում ԻԱԿ-ը տրամադրել է 7850 անձանց (քաղաքացիներ, լրատվամիջոցներ, հասարակական կազմակերպություններ, պաշտոնյաներ, մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ) տեղեկատվության մատչելիության և հակակոռուպցիոն խնդիրների վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություններ; ունեցել է թվով 54 դատական գործեր պետական և ինքնակառավարման մարմինների դեմ՝ տեղեկատվության հարցումների անհիմն մերժման համար, որից 80%-ը՝ դրական ելքով; կազմակերպել է ՀՀ

տարածքով մեկ վերապատրաստման դասընթացներ ավելի քան 6650-ից ավելի անձանց, այդ թվում՝ 3500 պաշտոնատար անձանց համար՝ «Տեղեկատվության ազատության մասին» կիրառման և հակակոռուպցիոն թեմաների շուրջ: ԻԱԿ-ը 2001 թվականից ի վեր հրատարակում է «Դուք իրավունք ունեք իմանալ» տեղեկագիրը, միակ հայ պարբերականը, որը մասնագիտացված է տեղեկատվության ազատության մեջ: 2014 թվականից ի վեր ԻԱԿ-ը հրատարակում է «Բաց կառավարման գործընկերություն» էլեկտրոնային ամսաթերթը: ԻԱԿ-ը ամեն տարի տարեկան 1000-ից ավելի տեղեկատվական հարցումներ է ուղարկում պետական գերատեսչություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին, որը դարձնում է ՀԿ-ին ամենից ակտիվ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից օգտվողը: Վերջին 17 տարիների ընթացքում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» իրականացրել է մի շարք մշտադիտարման ծրագրեր՝ պարզելու համար տեղեկատվության ազատության վիճակը և Հայաստանում բաց կառավարման գործընկերության համաստեղծման և իրականացման պրակտիկան: ԻԱԿ-ը 2014 թվականին ստեղծել է Բաց կառավարման գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը և ակտիվորեն աջակցում և համակարգում է Բաց կառավարման գործընկերության հարթակում տարբեր ՔՀԿ-ների: ԻԱԿ-ը 2012 թվականից հանդիսանում է Բաց կառավարման գործընկերության/ Հայաստանյան աշխատանքային խմբի հիմնադիր անդամ, 2014 թվականից ՀՀ պետական հակակոռուպցիոն խորհրդի անդամ և 2016 թվականից ի վեր Տեղեկատվության ազատության ամերիկյան ազգային Կոալիցիային պատվավոր անդամ: ԻԱԿ-ը 2002 թվականից ի վեր հանդիսանում է նաև Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի հիմնադիր անդամ և «Տեղեկատվության ազատություն Եվրոպա» կազմակերպության հիմնադիր անդամ: Ներկայումս, կազմակերպությունը ունի ավելի քան 40 անդամ ամբողջ Հայաստանից, ներառյալ կամավորներ՝ տարբեր համալսարաններից:

Շնորհիվ խոշոր դոնորների, այդ թվում ԱՄՆ ՄԶԾ-ի, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան, Համաշխարհային բանկի, ԵՄ-ի, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Մեծ Բրիտանիայի դեսպանատան և շատ այլոց աջակցությամբ, ԻԱԿ-ին հաջողվել է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք հանգեցրել են շահերի պաշտպանության հաջողությանը և էական ազդեցություն ունեցել տեղեկատվության ազատության և Հայաստանում հակակոռուպցիոն պայքարի իրավունքի, ինչպես նաև քաղաքացիական ներգրավվածության իրավունքի խթանմանը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարի՝ 2014 թվականի մայիսի 3-ի հրամանով ընդգրկված է եղել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի կազմում (համապատասխան կայքէջ՝ http://moj.am/legal/view/article/672):

Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև ՀԿ-ի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկություն ստանալու նպատակով կարող եք այցելել հետևյալ կայքէջերը՝ http://www.foi.am/hy/, http://www.givemeinfo.am/hy/:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք դիտարկել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ ՀՀ Արդարադատության նախարարին կից հասարարակական խորհրդի կազմում ընդգրկման հնարավորությունը:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան